Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային
կենտրոնի տնօրեն
_____Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԲԱԺԻՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
2019 թ.

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ասպիրանտուրայի բաժինը հաշվետու տարում կազմակերպել և իրականացրել է 2019-2020 թթ. առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելությունը: Արդյունքում առկա ուսուցմամբ ասպիրանտուրա է ընդունվել 13 անվճար և 1 վճարովի հիմունքներով ասպիրանտ: Հեռակա ուսուցմամբ՝ 10 անվճար և 2 վճարովի հիմունքներով ասպիրանտ:

Տարեսկզբին ԳԱԱ ասպիրանտուրայում պետական պատվերով սովորում էր 107 ասպիրանտ (47-ը՝ առկա, 60-ը՝ հեռակա), վճարովի հիմունքներով՝ 4 արտերկրացի ասպիրանտ: Հայցորդների թիվը 200 է. 75-ը՝ վճարովի, 125-ն՝ անվճար (ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

Հաշվետու տարում ասպիրանտուրան ավարտել է 46 ասպիրանտ (28-ը՝ առկա, 16-ը՝ հեռակա), որից 2-ը՝ վճարովի հիմունքներով (արտերկրացի ասպիրանտ): 2019 թ. առկա ուսուցմամբ ասպիրանտուրա է ընդունվել 26 ասպիրանտ, որից 13 առկա, 10 հեռակա 3-ը՝ վճարովի հիմունքներով:

Առ 01.01. 2020 թ.՝ պետպատվերով սովորող ասպիրանտների ընդհանուր թիվը 95 է, 32-ը առկա, 57-ը հեռակա և 6-ը՝ վճարովի հիմունքներով, որից 3-ը արտերկրի քաղաքացի է: Հայցորդների թիվը 176 է. 75-ը սովորում է վճարովի, 101-ը՝ անվճար հիմունքներով (ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

Հաշվետու տարում որակավորման քննություններին նախապատրաստելու և դրանք հանձնելու նպատակով ասպիրանտների և հայցորդների համար կազմակերպվել են գարնանային և աշնանային դասընթացներ “Մասնագիտական օտար լեզու” (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն), “Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ” և “Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն” առարկաներից:

Տարվա կտրվածքով քննություններ են հանձնել՝ «Մասնագիտական օտար լեզու» առարկայից՝ 62, «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» առարկայից՝ 53, «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկայից՝ 51 ասպիրանտ և հայցորդ:

2019թ. ԳԱԱ ասպիրանտուրայում պաշտպանվել է 44 թեկնածուական ատենախոսություն, որից 23-ը ասպիրանտների կողմից, 15-ը՝ հայցորդների և 6 արտերկրացիների կողմից:

Բաժնը հաշվետու տարում կատարել է "ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ասպիրանտուրայի ընդունելության, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման" կանոնակարգի լրամշակում՝ հաշվի առնելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ԲՈԿ-ի կանոնակարգերում կատարված փոփոխությունները: Կատարվել է ասպիրանտների և հայցորդների ուսումնական գործընթացի, ընթացակարգերի պատրաստման գիտակրթական ծրագրի մեթոդական փաստաթղթերի, պայմանագրերի և եզրափակիչ ատեստավորման կազմակերպման կանոնակարգի վերամշակում: Գործածության է ներկայացվել նոր եռակողմանի պայմանագիր՝ գիտական կազմակերպության, ասպիրանտի և գիտական ղեկավարի միջև:

Հաշվետու տարում ասպիրանտուրայի բաժինը Գիտակրթկան միջազգային կենտրոնի որակի ապահովման բաժնի հետ համատեղ իրականացրել է ասպիրանտների շրջանում հետազոտություն, որի հիմնական նպատակն էր գնահատել ասպիրանտների գոհունակությունը Կենտրոնի կողմից մատուցվող կրթական դասընթացների կազմակերպումից և իրականացումից: Հետազոտության նպատակն էր նաև պրոֆեսորադասախոսական կազմին հնարավորություն տալ կրթական ծրագիրը վերանայելիս հաշվի առնել ասպիրանտների կարծիքները: Հետազոտությունը անցակցվել է էլեկտրոնային հարցաշարի լրացման միջոցով՝պահպանելով հետազոտության մասնակիցների անանության սկզբունքը:

Հաշվետու տարվա ընթացքում պատրաստվել և տրվել են տեղեկանքներ՝ որակավորման քննությունների մասին ԲՈԿ ներկայացնելու համար և պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տրամադրելու վերաբերյալ զինկոմիսարիատներին ներկայացնելու համար:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պահանջով հավաքագրվել և ձևավորվել են ԳԱԱ գիտական կազմակերպություններից հաշվետու տարում ընդունված, սովորող և ավարտած ասպիրանտների, դոկտորանտների, հայցորդների թվաքանակի և շարժի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունները՝ համաձայն «Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» և «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման» ձևի և կարգի: